ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ժ. ԲԵԳԼԱՐՅԱՆԻ «ՓԱԿԱԳԾԻՑ ԴՈՒՐՍ» ԳՐՔԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ*

Ալիսա Բաղդասարյան

Բանալի բառեր՝բանաստեղծական շարք, ենթատեքստ, քաղաքական իրավիճակ, իրականություն, երևակայություն և ներաշխարհ, փիլիսոփայական խնդիրներ, հոգեբանություն:

«Փակագծից դուրս» գիրքը ժամանակակից ինքնատիպ գրող Ժաննա Բեգլարյանի բանաստեղծական հոգու յուրահատուկ ընդհանրացումն է: Ժողովածուն բաղկացած է «Փակագծից դուրս» և «Ծովի օրենքով» շարքերից: Ժամանակային տարբեր ձևույթների մեջ գրողն արտացոլում է ոչ միայն իր ներաշխարհն ու հոգու երանգները, այլ նաև ժամանակաշրջանի հասարակական, քաղաքական իրավիճակները («Չեմ կարողանում // անջատ մնալ // եղծված գույներից // ու վրաս եմ առնում // մրուրը ժամանակիս»):

Ժ. Բեգլարյանը վերհուշի ու երևակայության միջոցով լուսավորում է իր տխուր, տաղտուկ, անգույն ներկան: Նրա բանատողերում անցյալը գունազարդ է, ներկան՝ գորշ, ապագան՝ անորոշ («Ներկան փշերի խուրձ է: // «Ապագա» հասկացություն չկա»):

Ժամանակի և տարածության մեջ բանաստեղծուհու էմոցիոնալ դաշտը ենթարկվում է գեղարվեստական վերացարկման ու դառնում պատկերման նյութ: Ստեղծագործական երևակայության կիզակետում կենսական իրականությունը գեղարվեստականացվում է, և ցանկությունն ու երազանքը բանաստեղծուհուն գորշ իրականությունից պոկում, հասցնում են գունազարդ երազանքների գիրկը («Վրաս եմ առնում// ծիածանի գույներից// հյուսած զգեստս, // հետո այն որպես // առագաստ եմ բացում, // որ չխորտակվեմ ձգվող // տարաժամում»)[1]: Տրամադրության անկումները, հիշողության դեգերումները, հարմարվողականության պարտադրանքն ու անհանդուրժելի փոփոխականությունը նրան տանում են դեպի երազային, երևակայական տարածքներ, որտեղ սև ու սպիտակի փոխարեն գույների տոն է:

Ժ. Բեգլարյանի բանաստեղծություններում փիլիսոփայական ընդհանրացումները բավականին ընդգրկուն են, սակայն բնականն այն է, որ դատողությունը, փիլիսոփայությունը չեն սառեցնում էմոցիան: Բանատողերում զգացմունքայնությունն իշխող է, պատճառը, թերևս, գրողի փիլիսոփայական մտապատկերի և զգացմունքային ընդհանրացման գերազանց համադրման շնորհն է: Այն պայմանավորված է հեղինակի բնավորությամբ: Նա, իր էությամբ, գաղափարական-հիմնավոր արժեհամակարգ ունեցող անհատ է, ում մոտ էմոցիոնալ դաշտը մտավոր դաշտի պրիզմայի միջով է անցնում:

Բանաստեղծուհին, իր հոգում կատարվող վերուվարումները հարաբերակցելով ծառի, ծաղկի, քարի և բնության այլ երևույթների հետ, ընդգծում է իր մտերմությունն ու անքակտելի կապը բնության հետ: Նա, ասես, ջանում է պոկվել հասարակական մի-

---

* Հոդվածն ընդունվել է 11.02.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.թ., դոցենտ Ն. Հովհաննիսյանը: 19.02.21:

ջավայրից և ապրել երևակայությամբ կերտված իր ներաշխարհում: Նրա բանաստողերը լավագույնս ընդհանրացնում են Հովհ. Թումանյանի հետևյալ միտքը. «Երևակայությունը խենթ է, համարձակ, երևակայությունը թռչող Պեգաս է… » [2]:

Ժ. Բեգլարյանի երևակայությունը՝ անսահման նվիրումով ու հավատարմությամբ պարուրված, գեղեցիկ տեսադաշտ է բացում: Նրա բանաստողերում սիրո փառաբանումը հավերժության ձգտում է, մաքուր, գունազարդ ամբողջություն, առանց որի կյանք չկա: Բանաստեղծուհին ձգտում է զգացմունքի տարածքում իրականությունից վեր թաքնված խորհրդավորությունների հասնել: Ինքնակատարելության ձգտող բանաստեղծուհին ուզում է, որ իր սիրելին էմոցիոնալ դաշտում նույնպես հասնի կատարելության, որտեղ միասին երջանիկ կլինեն: Եվ այդ զգացմունքային ուղեծրում երևում է տանջվող, բայց լուսավառ կինը:

Ժ. Բեգլարյանը, ռեալ իրականությունից ստացած տպավորությունների, կենսափորձի, սեփական դիտարկումների և գրական-գեղարվեստական յուրացումների համադրմամբ, ստեղծում է հուզական, խոհափիլիսոփայական հետաքրքիր պոեզիա: «Գրականությունը հայելի չէ լոկ,- նկատել է Թումանյանը,- և եթե հայելի էլ ասենք, ապա շատ տարօրինակ ու կախարդական հայելի է նա: Նա ոչ միայն արտացոլում է ժամանակը և իր դեպքերն ու դեմքերը, այլև տալիս է իր լույսն ու ջերմությունը կյանքին ու ձգտում է կյանքում ստեղծել մարդու էն վեհ ու վսեմ, էն մաքուր ու անաղարտ պատկերը, որ տվել է նրան աստված, կազմված ու հյուսված բնության ամենամաքուր տարրերից» [3]: Ժ. Բեգլարյանը կիրառելով կենսական միջավայրի տարածական և ժամանակային հեռավորությունը, ընդգծելով իր հուզառատ ներաշխարհը՝ ստեղծում է բարի, իմաստուն, երազային մի տարածք, որտեղ ամեն մի առարկա իր տեղում է, յուրաքանչյուր բառ՝ իմաստավորված: Բանաստեղծուհու՝ մարդ-անհատի ինտելեկտուալ և զգայական ներուժը հետաքրքիր բանաստեղծական տարածք է բացում: Հասարակական հարաբերությունների ազդեցությունը բնավ չի զրկում բանաստեղծուհուն իր ներաշխարհի ինքնատիպությունից: Նա պատրաստ չէ հարմարվել իրեն խորթ թվացող իրողությունների հետ: «Հարմարվողականությունը սառեցնում է արյունս»,- նշում է նա: Նրա հոգեվիճակներում միստիկական շեշտադրումներ կան: Ժ. Բեգլարյանի բանաստեղծական աղերսների մեջ լեզվական պատկերավոր խտացումներով մարդ-աստված զուգահեռի ընդգծում կա: Նա իր զգացմունքները հասցնում է վերերկրային մի անեզրության: Նարեկացիական շունչ կա Ժ. Բեգլարյանի բանաստեղծական ընդվզումներում: Ինչպես Նարեկացին, մեղք չունենալով, դառնում է դարի մեղսակից («եւ քանզի մաքուր գալով ի վնասուց, ի զայս խոստովանութիւն գոչեցի… »): Ժ. Բեգլարյանն էլ, դարաշրջանի մեղքերը սեփական մաշկի վրա զգալով, ասում է. «Գործվող բոլոր մեղքերի հանցակից եմ զգում ինձ» [4]:

Բանաստեղծուհին հայտնվել է կյանքի մի փուլում, որտեղ ընկալումների խառնաշփոթ է: Ապրածն ու չապրածը, արածն ու չարածը տարօրինակ հարթության մեջ են: Կարծես քնից արթնանար բանաստեղծը և տեսներ, որ ամեն ինչ փոխվել է, և այդ փոփոխության մեջ ոչինչ իրենը չէ, ամեն ինչ խորթ է, օտար, անհասկանալի, գրողի քիմքին անհարիր, անմարսելի: Անցյալը գեղեցիկ է՝ «մանկահոտ» օրերի, հայրենի դաշտերում քնքշությամբ բացված ծնծաղիկների, անցած սերերի, վառ հուշերի շքահանդեսում, որոնք զուտ հիշողություն են, այլևս՝ անօգուտ, ինչ-որ չափով՝ ցավոտ, որովհետև ներկան գյուտարարական մրցավազքերի անիմաստ վատնում է՝ գույներից զուրկ, հիասթափված, տխուր, կարոտներով լի («Այս տևական լռությունից»):

Ժ. Բեգլարյանն իր բանաստողերում ուրվականի նման թափառում է ապրած կյանքի անձավներում և փորձում է գտնել սպասումներն արդարացնող նիրհող ասքերը: Բանաստեղծուհին ասում է. «Ուրվական եմ,//թափառում եմ անձավներում // ուր ասքեր են նիրհում// ընկածների մասին»: Հարկավ, գրողը նկատի ունի իր ազգի կորուստներն ու սպասումները, որոնք, սակայն, այնքան խոր նստվածք են թողել նրա հոգում, մտել կեն-

սակերպ, որ վերագրումը հիմնավոր է: Ժաննա Բեգլարյանը հայրենասիրության մասին բառացի կոչեր չի անում, պարզապես իր երկրի «անբնակիչ պալատների» պատերին ամեն իրիկուն «մոմեր է վառում, որ բոցավառվի սպասման հույսը», որովհետև իր հայրենի «հողը աղակալում է սպասման ճանապարհին» («Քայլերս այնտեղ եմ ուղղում»): Կորուստներ տեսած ազգի բանաստեղծը հիասթափությունն ու ակնկալիքները խմորում է իր բանաստեղծություններում, որովհետև շնչահեղձ է լինում ճակատագրով իրեն բաժին հասած երկրի անորոշ ներկայից: Մանկության, հայրական տան, մոր կորստի, հոր ավանդապաշտության, անգույն ներկայի, անզոր անցյալի պահ-պատկերներով լիանում և անէանում է բանաստեղծուհու երջանկության զգացողությունը:

Ժ. Բեգլարյանը գեղեցիկի ընկալմամբ, հոգևորի արժևորմամբ, նրբանկատ ընդգծումներով համադրում ու հակադրում է երևույթներն ու իրադարձությունները, որտեղ գեղագիտական նպատակ, ընդհանուր կապակցվածություն և ներգործություն կա: «Հորթուկի պաղած աչքերով աղջիկն» արտահայտում է այն միտքը, որ ինքը չի մեծացել.

Ներիր, մա, չմեծացա,
մնացի քո կարած
չթե ծաղկաշորով աղջիկը՝
լինելիության անցուդարձի
ոլորաններում մոլորված [5]:

Ժ. Բեգլարյանը ժամանակի հոսքի մեջ դառնում է «բառե աշտարակ»՝ գիտակցելով, որ «ժամանակը խարխլել է» իր դիմագիծը, հիմնավորումը «գետում բուրդ լվանալ» չիմանալու խորհրդապաշտական ընդգծումն է: Գետեզրի քարը, որի վրա բանաստեղծուհու մայրն իր «լվացած բուրդն էր ջրաքամում», հարյուր տարի սպասում է իր չլվացած բրդին: Հայրենի տունն ու անցյալի քաղցր հիշողությունները բախվում են օտար ու անտարբեր ներկայի անորոշությանը: Բանաստեղծուհին, ով իր կյանքում «որևէ բան վաճառած չկա», հոգու «պայքարի թափը կորցրած», պատրաստ է հրաժարվել իր արժեհամակարգից՝ «բառե աշտարակից», քանի որ «դժվարացել է շնչել նրա անթվածին ներսում»: Սակայն նա, ում միակ ձգտումը հայրենիքի «կերպարն աղավաղումից փրկելն է», իր ներսի վազքով հայտարարում է. «Ես ապագայի բնակիչ եմ՝ // իմ բացարձակ // իրավունքներով»[6]:

Ժամանակային տարբեր ընդգրկումների համեմատականում այնպիսի զգացողություններ են առաջանում, որ տակնուվրա են անում նրբանկատ, բարձր արժեքներով զինված, գրքերով հագեցած մարդու հոգին: Հիասթափության, հուսահատության ալիքը բանաստեղծուհուն կանգնեցնում է տխուր փաստի առաջ, և ծնվում են այնպիսի զգացողություններ, որոնք դառնում են հեծկլտոցներ: Բանաստեղծուհին խոստովանում է.

Այն զգացողությունը,
թե ծնված պահից
որբ եմ, և ինձ չափ
որբ են նաև
իմ աշխարհ բերած
երեխաները,
չի լքում ինձ [7]:

Բանաստեղծի պայքարող ոգին՝ հոգու ամրությամբ, շարունակում է հավատալ, որ անցյալի բոլոր շքեղությունները տարիների խորքում չեն մնում, որովհետև «Ամենաշքեղը հավերժի զգացողությունն է» («Այս տևական լռությունից»): Նա, չենթարկվելով «քայլերի մանվածքին», իր սպասումն արթնացնելու համար «պատուհանի գոգի ծաղկամանը մի հատիկ է գցում» («Այս տևական լռությունից»): Բանաստեղծուհու «առավոտը հույս» է դառնում, անկախ նրանից, որ «Անցյալը քաղցր // հուշ չէր այլևս, // այլ ներկայի // անհրապույր կցորդ» («Երգը արձագանք չտվեց»): «Փողոցային, անհրա-

պույր էժանացած» բառը հայտնվեց իրականության մեջ, «զավեշտը շիկացրեց օդը», և «մի հաստատուն պատ չկար», որ բանաստեղծուհին կարողանար «ծեփվել նրան» և փրկել իր «ինքնության ազնվությունը» («Ես շնչում եմ զավեշտը»): Սակայն նա համոզված է, որ իր արյան մեջ պահվում է արմատի «հուշաբջիջը, այն մի օր արթնանալու է իր ծոռնեծոռնուհու մեջ» («Առավոտը հույս է»):

Ժ. Բեգլարյանը փիլիսոփայական դիտարկումներով, յուրօրինակ ընդհանրացումներով, շոշափելի պատկերներով ցույց է տալիս ժամանակաշրջանի ողբերգությունը: Արժեհամակարգի կտրուկ փոփոխությունը, հոգևորի անկումը, նյութի փառաբանումը, և մի շարք այլ երևույթների նորովի ընկալումները մարդուն դարձնում են անգութ, անպաշտպան. «տուր և առը շնչահեղձում է ազնիվ գոյի ձգտումը», և «Մարդու վեհ տեսակն // անարգվում է // ստրկամտության հաղթարշավում». գորշությունը «պատում է Արևի դեմքը» («Հնահոտությունների»):

Ինչպես Սևակն է Մարիամին խնդրում մաքուր պահել իրեն բոլոր բացասական իրողություններից, այնպես էլ Ժաննա Բեգլարյանը դիմում է տիրոջը՝ խնդրելով նրան օգնել իրեն՝ «լույսի հրաշքից» չզրկվելու հարցում.

Տե՜ր իմ, ձուլի՜ր ինձ
այդ ծաղկին.
նրա մեջ մշտարթուն է
մաքառման
հուշաբջիջը [8]:

Ժ. Բեգլարյանի բանաստեղծություններում իշխում են հուշն ու հիշողությունը: Նա ժամանակային տարբեր իրողություններում արժևորում է պահը, որը մշտականության խորհուրդն ունի: Հայրենի գյուղը, հայրական տունը, մայրական սերն ու հոգատարությունը, հայրական ավանդապաշտությունը՝ տան պատից թափվող քարերի ճշգրտված համարակալումների ընդգծումով, խորհրդապաշտական նուրբ ակնարկներ ու կարևոր դրվագներ են բանաստեղծուհու կյանքի բոլոր փուլերի համար:

Հիշողությունից կառչելն ու նրանով ապրելը, թերևս, պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկան չափազանց անշուք է, անգույն, և բանաստեղծուհին գույների պակասից չի կարողանում հարմարվել իրողությանը:

«Բեռնված տող»-ից հոգնած, «հոգեպարար խոսքի» կարոտ՝ գրողը, իրենից վանելով «շահավետ գործարքների քաոսը», սպասում է «այլմոլորակայինի», ով կտանի իրեն.

Սպառվել է
սոցիալական ժամանակս
այս տարածքում [9]:

Հաջորդ բանաստեղծության մեջ, սակայն, բանաստեղծուհու «օթյակները երազանքի» «ճռվողյունով» լցվում են այն փոքրիկ հրաշքով, ում «կաթնահոտ բույրը» ստիպում է բանաստեղծուհուն «շվարել գոյի առեղծվածի առաջ» («Հրաշքս»):

Քնարերգու հերոսը փոխակերպվում է «այն ջերմությանը, որից բողբոջ է պայթում գարնանը» («Սահմանախախտն եմ գոյի-չգոյի»):

Գրեթե բոլոր բանաստեղծություններում բառերը ներկա են տարբեր հոգեվիճակներով: Բանաստեղծուհու երակներում անհաշիվ բառեր են «պտղավորվում»: Այն բառերը, որ զարդարում էին լռությունը, «հիմա բուրում են հնահոտությամբ», և Ժ. Բեգլարյանը նորից սպասում է «նորանուն բառի»:

Բառերի հետ կապված հետաքրքիր են բանաստեղծուհու հետևյալ ընդհանրացումները. «Հոգին, որ մամլվել է բառապատիկ» [10], «Իմ երակներում // պտղավորվում են // անհաշիվ բառեր, // որ նորից լույսի// ասքերը հյուսեմ…»[11] և այլն:

Բանաստեղծուհու հոգեկերտվածքում անխաթար են մնում մաքուր, ազնիվ, վեհ ու առաքինի հատկությունները: Գրականության, բառի կարևորությունն իմացող մար-

դու հոգեբանության մեջ չեն տեղավորվում արդի բարոյալքված, նյութապաշտ, գորշ չափորոշիչները: Ամեն ինչ պարադոքսվելով վերածվում է քաոսի: Անցյալը, ներկան, ապագան այլևս հիմնավորումներ չունեն: Աղավաղումների մեջ պղտորվում է նաև ժամանակի դիմագիծը: Ճիշտն ու սխալը խառնվել են իրար, լավն ու վատն այլևս կոնկրետացում չունեն: Այլ արժեհամակարգով ձևավորված անհատը ժամանակի խառնաշփոթի մեջ կորցնում է գլուխը: Բանաստեղծուհու հոգին նրբանկատորեն զգում և փորձում է մի կերպ հաղթահարել ստեղծված իրավիճակը: Նրա հոգու ընդվզումները, զգացմունքային վերուվարումները, տրամադրության փոփոխություններն իր ես-ի ինքնությունը պահպանելու փորձ է, տառապալից, ինքնախարազանող, ինքնակեղեքող փորձ:

Բանաստեղծուհու տողերում կոնկրետ տարիքային շեշտադրումներ չկան. «Տեսնես քանի տարեկան կլինեմ, // որ այսպես թացացել է // մանկության հուշը»: Մանկության հետ կապված հուշերում և ակնարկներում երևում է կյանքի հունձք ունեցող, ինչ-որ տեղ վերապրումներով առաջ գնացող մարդը: Մեկը, ով արդեն ապրել է կյանքի գարունները և աշնան տերևաթափի մեջ անգամ դեղնած տերևներից այն կողմ անցնում է իրեն սպասող ճանապարհով: Սակայն նրա հոգու կրակը, նրա վերերկրային երևակայական աշխարհը նրա մեջ պահում է այդ նրբերանգ տերևները գրքերի էջերում տեղավորելու գաղտնի երազանքը: Նա պատրաստ է «Վերակենդանացման հեռագրեր հղել անցած սերերին», և սիրել «առաջին սիրո մաքրությամբ»: Ժ. Բեգլարյանը հիշողության արահետներում վերապրում է կյանքի գրեթե բոլոր եղանակները («Կարոտին», «Անավիշ ճյուղից ընկած»): Թերևս հենց այդ առաջին սիրո անիրական երազանքն է, որ մնում է չբացված նամակների մեջ, որտեղ մի ամբողջական կյանք կա՝ թե բառացի, թե տողատակված մտքերով.

Քեզ հղած իմ բոլոր
նամակները մնացին չբացված:
Այնպես էլ չիմացար՝
Ինչպես են բոցավառվում
Բառերը, երբ հղվում են քեզ… [12]

«Անսահմանի» տարածքներում տնկած կաղնիների տիրուհին, «սուզվելով անեզրությունն հայացքների», «չասված բառի» ներշնչանքով ջերմանում է՝ փաթաթվելով նժույգի տաք բաշերին («Նժույգներդ»):

Անցյալի հուշերով զարդարելով ներկան՝ բանաստեղծուհին, ինչպես ցանկացած կին, շոյվում է սիրո խոստովանությունից՝ թեկուզ անցած օրերի հուշերով պարուրված: Նա գիտի, որ ամեն ինչ փոխվել է, իրենք են փոխվել, և այն, ինչ պիտի ասվեր ժամանակին, և չի ասվել, այդպես էլ չասված կմնա: Այդպես պատանդված նժույգները հեռանալու ոչ մի հնար չեն ունենա: Քնարերգուն ներկա պահի մեջ առավել շատ է զգում այդ ձիերի վարգելու անհրաժեշտությունը, քան, եթե այն լիներ յուր ժամանակին: «Ինձնից օտարված // ժամանակի ուրվականը // հետապնդում է ինձ»,- այսպես է մտածում «Հայկ Նահապետի աղեղը փնտրող», «մի հսկա թռչուն որսալ ցանկացող» բանաստեղծը, ում մտքի խորանում «բառն իմաստավորվում է՝ իր մեջ բեկելով անբացատրելին»: Նա անընդհատ սպասում է «աչքերի մեջ ծիածանի բոլոր գույներն» ունեցող մանկան ծննդին: Բանաստեղծությունը որպես «կեցության բացարձակ ձև» ընդունող բանաստեղծուհին, ով իր պոետներին նախկին զգայականությամբ կարդալու ցանկություն է ուզում «այս անբարո ժամանակում», գերադասում է ապրել «փակագիծ չհիշեցնող տարածքում»:

Ժ. Բեգլարյանը գոյի իմաստավորման առանցքում հիմնավորում է զավակի դերը՝ ժամանակային բոլոր ընդգրկումներում («Ամենակոնկրետը դու ես՝// երեկ,// այսօր,// վաղը»): Ինքնագտնումի և շարունակականության կարևոր նախապայմանը համարե-

լով որդու, զավակի գոյությունը՝ նա ամրանում է հրաշքի եռապատկվող զգացողությունից.

ՈՐԴԻ՞.... ՁԱՎԱ՞Կ:
Ես այլևս տիեզերական
գաղտնիք բացելու
ցանկություն չունեմ,
որովհետև ամենամեծին եմ հասու [13]:

Բանաստեղծության մեջ ընդգծված «եռապատկվում է հրաշքը» արտահայտությունը, սուրբ երրորդության խորհրդից զատ, մեկ այլ խորհուրդ էլ ունի: Բանաստեղծուհին ամրանում է իր երեք անգամ մայրանալու երջանկությամբ: Նա անձնականը դարձնում է անանձնական՝ հաստատելով այն ճշմարտությունը, որ ծնող-զավակ կապը միակն է, որ անխաթար ու անշահախնդիր է բոլոր ժամանակներում: Ամեն ինչ անցողիկ է, բոլոր զգացողություններն ու զգացմունքները, փոխհարաբերություններն ու միությունները ժամանակավոր են՝ պայմանականություններով, սահմանափակումներով հագեցած: «Մեծ սերն» անգամ մի օր կարող է «նետել աղբարկղ» («Սպիտակ թղթին հառած»)՝ որպես կյանքի մի հատված:

Բանաստեղծուհու կյանքի ցավալի դրվագներում ավարտվում է անցյալը, և անորոշվում ապագան, իսկ ներկան անսպասելի վրա հասած միջանցիկ քամի է, քանի որ «ապակիները հալվել էին շոգ արևից», և աշխարհը «վերածվել է անհրապույր զանգվածի» («Սպիտակ թղթին հառած»): Հոգնած, «ծլլան թախիծով» փաթաթված խելագարվող աղջիկն իր փրկությունը տեսնում է պապերի փայփայած հինավուրց ծառին հենվելու մեջ:

«Փակագծից դուրս» բանաստեղծական շարքը՝ կյանքի բոլոր դրսևորումներով լիացած, յուրօրինակ մանրանկարների հավաքածու է, բանաստեղծուհու ապրումների կիզակետը՝ մեծ փակագծում հայտնված մարդու փակագծից դուրս ծգտումը: Եթե այս շարքում սիրո այս կամ այն դրսևորումը պատառիկներով է ակնարկվում, ապա նրան հաջորդող «Ծովի օրենքով» շարքի բանաստեղծությունները սիրերգության գունազարդ նմուշներ են:

Սիրո լուսեղեն տիրույթում հայտնված բանաստեղծուհին, տարիքից ու կարգավիճակից անջատ, լողում է, որովհետև «անհնար է չսիրել և չներշնչել սիրով քնքշացած օդը»: Բանաստեղծուհին բառերով է սիրում, կարծես չի համարձակվում գնալ իր սիրած էակի մոտ, նրան ֆիզիկապես մոտ լինել: Նա ուզում է, որ լինի հոգու և մարմնի համատեղելիություն, երազում, երևակայում է, թե ինչպես կարտահայտեր իր սերն ու կարոտը՝ հանդիպելով նրան, ով իրականում գոյություն ունեցող կերպար է, սակայն նրա ֆիզիկական ներկայությունը չի երևում հեղինակի բանաստեղծերում: Սիրահար զույգի երկկողմանի ներգործության առկայությունն այստեղ բացակայում է: Փոխարենն առկայծում են երազող, հուշերով ապրող, սակայն իրական, կրակոտ, խելահեղ սիրային հարաբերության պատրաստ ազնիվ կնոջ երևակայական թռիչքները՝ հագեցած շոշափելի, զգայուն պատկերներով: Հերոսուհին սիրում է, պատրաստ է սիրվելու, տրվելու, նվիրվելու: Նա համարձակ է բառերի մեջ, վախվորած՝ արարքներում («Իմ բառերի տեղատարափում»):

Գրքի առաջին շարքի բանաստեղծություններում հիշատակված հեքիաթի ասպետը, ում բանաստեղծուհին պատրաստ էր երկար սպասել, մի անկատար երազ է, որին սպասելը, սակայն, ամենաթովիչ համերգն էր՝ «ժամը վեցից մինչև յոթը»: Երկրորդ շարքի գրեթե բոլոր բանաստեղծություններում այդ սպասված ասպետը ներկա է, և երազել է տալիս քնարերգուին, սակայն այդ ասպետի «ներկայության պայմանը» ևս պայմանական է: Բանաստեղծուհու «մատների փնտրտուքը», «մազերի մեջ խրվելու», «շրթունքներին դրվելու», «մարմնի երևակայական հոտը» շնչելու անգուսպ մղումը զուտ երևակայական է, անշոշափելի, անիրական: Նրա «սիրո կուտակումների» «փո-

թորկի թափը» ներանձնական հաղորդակցման արդյունքում է երևում: Գեղեցիկ է «Ես ինչո՞վ մեղմեմ փնտրտուքը մատներիս» բանաստեղծության սիրապատումը.

Ես ինչո՞վ մեղմեմ
փնտրտուքը մատներիս,
որ ուզում են խրվել
մազերիդ մեջ,
դրվել շրթունքներիդ,
կոպերիդ հոգնությունը
շոյել, թափ տալ
թարթիչներիդ քարափոշին
ու անմեղ կաթնահամ
ցրել շուրջդ…[14]

Սիրո զգացմունքն այնքան խորն ու իմաստակիր է Ժ. Բեգլարյանի տողերում, որ յուրաքանչյուր պատկերի հետ զգում ես տեսնելու ուրախությունն ու չտեսնելու ցավը: Կարոտի լիարժեք ընդհանրացում է այս բանաստեղծությունը, որտեղ երևում են այդ մեծ ու վեհ զգացմունքը հեռավորության մեջ ապրող մարդու հոգու փոթորկումները. «մարմնի ամենափոքր հյուլեի տրոփյունը զգալու երջանկությունը»[15]:

«Քեզ անհնար է չսիրել» («Իմ բառերի տեղատարափում») համոզվածությամբ բանաստեղծուհին հերթական անգամ խոստովանում և փաստացի հավաստում է այն իրողությունը, որ այլևս չի տեղավորվում ոչ մի իրական հանգամանքում («Ունենալ- չունենալու // այս պայմանը // դաժան է») [16]:

Նրա հոգեպարար բանաստեղծություններն ոգեշնչող են, ծանրակշիռ, տրամադրող: Չկան տողերի կամ պատկերների անկումներ, մտքի բարձր տոնայնությամբ սկսվում և ընթանում են գործողությունները.

Ես քո նռենին եմ…..
Բքաշունչ ձմեռից հետո
մայիսի տաք շոյանքներից
հուռթի բացել եմ ծաղիկներս,
որ նրանց բոստրափայլը
շլացնի շրջապատս [17]:

«Սիրո նորօրինակ աստվածություն» կերտելու ցանկությամբ տոգորված և «հավատարմության գաղափարի վրա» կախման կետեր չհանդուրժող բանաստեղծուհին անգամ սիրո ելևէջներում չի մոռանում «առօրյա գորշագույները»: Նա նշում է նաև իր «բնույթի հեգնված ու եզակի» լինելը: Հեգնվածը, թերևս, քամահրանքով ընտրված բառ է, որը հոգևոր արժեքները կարևորելու և արդի չափորոշիչներն անարժեք համարելու մտադրությամբ է ընդգծվում: Գրողն իր «սիրո տեսությունը» պատրաստ է բազմացնել «որպես նորագույն կտակարան»: Եթե մի բանաստեղծության մեջ («Անավարտ քո կտավն եմ») քնարերգուն անավարտ կտավ է, որը եզրափակման կարիք չունի, քանի որ «անավարտ կտավները երազել են տալիս»: Ապա հաջորդ բանաստեղծության կիզակետում «ծառը բողբոջում է» նրա ափի մեջ և «ժամանակն ընկալվում եղանակներից դուրս» («Քո նկարած ծառը»):

Ֆրոյդն ասում է, որ արվեստագետն ի սկզբանե մի մարդ է, ով երեսը թեքում է իրականությունից, քանի որ չի կարող հարմարվել այն պայմաններին, որոնք պահանջում են հրաժարվել նախածին բնազդական բավարարումից: Եվ նա դիմում է երևակայությանը՝ առանց արտաքին աշխարհում փոփոխություններ կատարելու:

Ժ. Բեգլարյանի համար իրականությունը սահմանափակումների տարածք է, նա ձգտում է երևակայության անեզրությանը, որտեղ կարողանում է խախտել բոլոր պայմանականությունները՝ ազատագրելով ձգտումները.

Մենք չենք կարող
ներկայացում լինել,
ամեն ներկայացման վերջում
իջնում է վարագույրը,
որ ընթացք կասեցնող
միջոց է [18]:

Առանց սիրո շնչահեղձ բանաստեղծուհին համոզված է, որ երբ սիրում է, անգամ ձեռագիրն է փոխվում, իսկ սիրում է «միլիոն տարուց ավելի»: Ժաննա Բեգլարյանը անձնական օրինակով կոչ է անում «Ծալել, մի կողմ դնել բոլոր դիմակները», քանի որ «հոգու պայծառությունը» վերագտնելու համար շատ քիչ բան է պետք, որ հետո, երբ մարդը «տեսականորեն» գնի իր ներսը, «չքարանա»:

Հեղինակն անձնական ապրումների, հույզերի, զգացմունքների դիտակետում բարձրաձայնում է համամարդկային խնդիրներ: Այն, ինչը հուզում, տխրեցնում, ցավ է պատճառում բանաստեղծուհուն, իրականում, ողբերգություն է ժամանակաշրջանի մարդ -անհատի համար: Մարդ, ով չի կորցնում հոտառությունը և «մեքենայի կցորդ» չի դառնում:

«Քեզ համար» բանաստեղծության մեջ, որը, ի դեպ, ամբողջ գրքի մեջ միակ վերնագրված բանաստեղծությունն է, հեղինակն ընդգծելով «աշխարհի ու բացվող արշալույսների առաջ» իր մերկ լինելու հանգամանքը, և տագնապելով, որ կարող է մի օր հանկարծ «ԱՐԵՎԸ չծագել», արձանագրում է.

Ցանցկեն մաշկիս վրա են
բեկվում ժամանակի
բոլոր շեղումները [19]:

Պատահական չէ ընտրված «Քեզ համար» վերնագիրը, «Փակագծից դուրս» բանաստեղծական ժողովածուն ամբողջովին նվիրված է նրան. թե փակագծերից դուրս, թե փակագծերի ներսում իշխում է սերը: Սիրով է սկսվում և ավարտվում Ժ. Բեգլարյանի ժողովածուն: Սեր սիրած էակի, ընտանիքի, հայրենիքի, ընդհանրապես մարդկության հանդեպ: Նյութապաշտությունից, կեղեքող ստից, կեղծիքից հեռու՝ վեհ ու առաքինի զգացմունքներ է ուզում Ժ. Բեգլարյանը: Նրա հոգու ընդվզումները նյութեղենի և աննյութականի անհամատեղելիությամբ են պայմանավորված: Բանաստեղծուհին բացասական երևույթների յուրացման հեշտ ու սխալ ճանապարհով քայլելու ցանկություն չունի: Նա պատրաստ է տեսնել, զգալ, տառապել, բայց հրաժարվել իր սպասելիքներից՝ երբեք: Նա ուզում է անմնացորդ տրվել, և այդ ինքնանվիրումով երջանկանալ.

Որքան էլ փակես
սրտիդ ու մտքիդ
դռներն իմ առաջ,
ես քրմուհի եմ
ինքնանվիրման,
առավոտ ծեգին
իմ ինքնությունը
ես կընծայեմ քեզ [20]:

Բանաստեղծուհին կին, մայր, քաղաքացի լինելուց առավել, աշխարհի բնակիչ է, ժամանակի բոլոր շեղումների համար տառապող մարդ: Մարդ, ով այնքան համարձակություն ունի, որ կարող է խոստովանել, որ իր ննջարանում «Սիրո քրքրված արմատներն են լոկ մնացել»[21], իսկ «ոտնատեղում՝ մեռնող ու հառնող անանուն ծաղիկ» [22]:

«Դու քնի՞ր» բանաստեղծությունը, ասես, օրորոցային լինի, որը, սակայն, ոչ թե մանկանը, այլ իր սիրելիին քնեցնելու համար է: Նա քնքշությամբ «ներծծվում» է իր սիրելիի ներսը, և դառնում նրա վերջին բջիջը: Այն գեղեցիկ, հագեցած, յուրահատուկ

պատկեր է և, ինչպես հեղինակն է խոստովանում. «Անհնար է, որ նման անէացումից զավակ չծնվի» [23]: Նա կանացի հոգատարությամբ, անմնացորդ նվիրումով սպասում է «սիրո զավակի ծննդին», որ իր սիրելիի անունը նրան տա: Հոգեպարար մտքերով ապրող, բառի անդաստաններում իրեն գերազանց զգացող բանաստեղծուհին, մարմնից առավել գերադասում է հոգին.

Անհոգի մարմինը
տիեզերքի ծանրագույն
բեռն է՝
երկիր մոլորակի շարժը
կասեցնող [24]:

Նրա բանաստողերը հոգու արժևորում են, պլատոնական, երազային սիրո առկայծումներ: Հենց այդ է պատճառը, որ ռոմանտիկ գրողը «ծրագրում է», ոչ թե ռեալիստորեն «շեշտում» հերոսի վարքագիծը [25]:

Բանաստողերում («Երբ դու արթնանաս», «Երբ դու շրջվում ես», «Ինձ մի վանիր քեզնից») սիրահար կինն է՝ իր սիրատոչոր «բարի լույս»-երով, «բարի գիշեր»- ների հրաժեշտի վախերով, իրեն չվանելու խնդրանքով ու իր սիրելիի «արյանն ընթացք տվող»-ի վստահությամբ: Նրա սերն ու նվիրվելու ցանկությունն այնքան մեծ է, որ «մոգ» լինելով հանդերձ՝ պատրաստ է «անխոս ծվարել» իր սիրելիի հոգում: Բանաստեղծուհին պատրաստ է հրաժարվել իր սիրած էակից, քանի որ չի հասկանում այն սերը, որը սրբագործված չէ, իսկ նա այդպիսի մաքուր սիրո պահանջ ունի, և պատրաստ է միլիոն տարի էլ սպասել:

Ժ. Բեգլարյանի մտքի և հոգու անեզրության մեջ շատ խորն է սիրո արժևորումը: Նրա բանատողերի խորքում իշխում է սերը, սիրո ծգտումը, սիրո նահանջը, սիրո պահանջը, սիրո երազը: Սերը, սիրելիին ձոնված սրտի տողերը՝ դիպուկ համեմատություններով, բծախնդրորեն ընտրված բառերով, առանց ավելորդությունների, բացում են գրողի ներաշխարհը, ցույց տալիս նրա մարդկային հետաքրքիր ու ինքնատիպ տեսակը:

Համեստ, բայց ըմբոստ, երազող և իրականությանը բաց աչքերով նայելու համարձակությամբ բանաստեղծն ունի գեղեցիկ ապրելու իր տեսլականը, որտեղ սերը, սպասումը, անգամ կարոտը, ցավը ունեն իրենց յուրօրինակ համն ու հոտը.

Ես՝ որպես մրսած հավք,
եկել-ծվարել եմ թևերիդ մեջ
ու ներշնչում եմ մարմնիդ հոտը [26]:

Գարուն, մայիսյան սելավ, տոն «հույզերի ծովում», ամեն ինչ խառնվում է իրար և նրան հասցնում «երանության կղզիները», որտեղ հավերժանում է սիրո պահի մեջ:

Եթե «բեկբեկված կյանքի» լուսանցքներում բանաստեղծուհին նշում է. «Ու ներկան՝ անցյալը, // ներկան՝ միշտ անցյալ» [27]: Ապա նրա գրեթե բոլոր բանաստեղծություններում սերը ոչ թե անցյալ, այլև ապագա ժամանակով է դրված: Նրա սիրո առկայծումներն ապագային ուղղված ուղերձներ են, որոնք մի օր պիտի բացի ու կարդա նա, ում համար գրված են: Այլևս հեքիաթների չհավատացող, իր ներսի մանկանը հրաժեշտ տալով՝ որպես «ցնորք-երազ», անտեր, մուրացիկ սիրո «երկարած» սպասումից հիասթափված «կնոջ կոպերից թախիծ է ծորում», սակայն նա չի կարող հրաժարվել այդ ամենից, քանի որ անիմաստ է ապրելն առանց սիրած էակի («Մի մրսած երգ է»):

Զգացմունքի ձգողական ուժի ազդեցության տակ, կարոտի, սպասումի «լռության անծանոթ շերտերի մեջ» տխուր է բանաստեղծուհին: Նա հոգնել է երազելուց, ուզում է երազանքները իրականություն դառնան, և կյանքը նորից վառ գույներ ստանա, ինչը հնարավոր է միայն սիրո առկայությամբ և սիրելիի պարտադիր ներկայությամբ: Բանաստեղծուհին չի հանդուրժում «սև ու սպիտակի տհաճ համաձուլվածքը» կենսակերպ դարձնելու գաղափարը: Նա ուզում է վերադարձնել իր «գույները ծիածանի».

…վերադարձրո՜ւ
հրայրքները
օրերիս:
ՏԽՈՒՐ է
ԱՌԱՆՑ ՔԵԶ,
ՍԻՐԵԼԻ՜Ս [28]:

Մի շարք բանաստեղծություններ («Այլևս մի գնա», «Հետս զրուցիր») աղոթքներ են առ սիրելին: Աստվածային շնորհ համարելով իր հոգին պարուրած սերը՝ բանաստեղծուհին սրբացնում է իր սիրած էակին.

Ես կընդունեմ քեզ՝
որպես բացարձակ
տիրոջ [29]:

Ժ. Բեգլարյանի սիրո բռնկումները «հույսի բողբոջներ են», կյանքի համը զգալու լավագույն միջոցը, որից դուրս «համատարած անհամություն է»: «Իրականության հետ անհաշտ» բանաստեղծուհին խնդրում է իր սիրելիին.

Ցա՜ծ բեր ինձ
երկինքներից,
ու այնպե՜ս արա,
որ բախումս
անշարժ
կարծրություններին
այսչափ
ցավոտ չլինի [30]:

«Ծովի օրենքով» բանաստեղծական շարքն ավարտվում է հրաժեշտի ամփոփիչ խոսքով: Պոետը, ով «անհոգնել անվախճան սիրո երգն էր երգում», հարց է տալիս, արդյոք, նա, «ում սեր է անվանել», դեռ կա՞, բայց միաժամանակ գիտակցում է, որ ամեն ինչ անցյալում է, և անիմաստ է ապրել անցյալի հուշերով.

Եվ աղավնիները,
որ հար կտցել են
օրերիս տաղտուկը
և իրենց
թևերին առել
փշրանքները սիրուս.
օդ բաց թողեք [31]:

Ժ. Բեգլարյանը սիրո հավերժական ձգտումների մեջ «որբացած սերերի մղկտոցներով» հրաժեշտ է տալիս անցյալի հետ կապված հիշողություններին.

Ու պոետը.պոետը,
որ անհոգնել
անվախճան սիրո
երգն էր երգում,
հասցրե՞ց
վերջին անգամ
հավերժի
խորքին նայել [32]:

Ժ. Բեգլարյանի պոեզիան առանձնանում է իր եթերայնությամբ, ինտելեկտուալությամբ, գրական մաքուր հայերենի փայլատակմամբ: Նրա տողերում գռեհկաբանության, անվայել արտահայտությունների նշույլներ անգամ չկան: Նրանցում դասական և ժամանակակից մտածելակերպի համադրությամբ արժևորվում են վեհն ու առաքինին: Ժամանակակից պոեզիայի համապատկերում Ժ. Բեգլարյանի բանաստեղ-

ծությունն աչքի է ընկնում կանացի նրբությամբ, համարձակությամբ, ոգու ուժով, մայրական ջերմությամբ, փիլիսոփայական խորքով, դաստիարակչական ընդհանրացումներով, ճաշակով և տողի զգացողությամբ: ժաննա Բեգլարյանի տողի եթերայնությունը մաքուր ու անաղարտ զգացմունքների հանրագումար է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Բեգլարյան ժ.**, «Փակագծից դուրս»,«Չվերջացող տարաժամում», էջ 23, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., Ստեփանակերտ, 2017 թ.:
2. Թումանյան Ն., Հուշեր ու զրույցներ, Երևան, 1969, էջ 193:
3. Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. 4, Երևան,1951, էջ 240:
4. Բեգլարյան ժ., «Փակագծից դուրս», «Եղծվող արժեքներում», էջ 55, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., Ստեփանակերտ, 2017 թ.:
5. Նույն տեղում, «Դու հիմա քայլում ես», էջ 31:
6. Նույն տեղում, «Այս տևական լռությունից», էջ 9:
7. Նույն տեղում, «Միլիոն տարի», էջ 11:
8. Նույն տեղում, «Ժամանակի միրաժ», էջ 44:
9. Նույն տեղում, «Ծայրեծայր բեռնված տողը», էջ 38:
10. Նույն տեղում, «Ես փչում եմ», էջ 48:
11. Նույն տեղում, «Սահմանախախտն եմ», էջ 43:
12. Նույն տեղում, «Անավիշ ճյուղից ընկած», էջ 53:
13. Նույն տեղում, «Ահա դու, միակը», էջ 75:
14. Նույն տեղում, «Ես ինչով մեղմեմ», էջ 115:
15. Նույն տեղում, «Իմ բառերի տեղատարափում», էջ 114:
16. Նույն տեղում, «Վերցրու վրձինդ», էջ 119:
17. Նույն տեղում, «Ես քո նռնենին եմ», էջ 120:
18. Նույն տեղում, «Անավարտ քո կտավն եմ», էջ 123:
19. Նույն տեղում, «Քեզ համար», էջ 127:
20. Նույն տեղում, «Լույսը կբացվի», էջ 164:
21. Նույն տեղում, «Անքուն գիշերն է», էջ 133:
22. Նույն տեղում:
23. Նույն տեղում, «Դու քնիր», էջ 135:
24. Նույն տեղում, «Դու», էջ 139:
25. Ռընե Ուելլեք, Օսթին Ուորրեն, «Գրականության տեսություն», Երևան, 2008 թ., էջ 123:
26. Բեգլարյան ժ. , «Փակագծից դուրս», «Ես՝ որպես մրսած հավք», էջ 149, Ստեփանակերտ, 2017 թ.:
27. Նույն տեղում, «Ինչ-որ բան ջարդվեց», էջ 154:
28. Նույն տեղում, «Առավոտը», էջ 171:
29. Նույն տեղում, «Հետս զրուցիր», էջ 174:
30. Նույն տեղում, «Այսպես ստացվեց», էջ 180:
31. Նույն տեղում, «Հոգին, որ բեկբեկվել է», էջ 187:
32. Նույն տեղում, էջ 186:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Ժ. Բեգլարյանի «Փակագծից դուրս» գրքի բանաստեղծական սահմանները
Ալիսա Բաղդասարյան

Սույն հոդվածում ուսումնասիրվում և արժևորվում է ժամանակակից ինքնատիպ գրող ժաննա Բեգլարյանի «Փակագծից դուրս» գիրքը, որը հեղինակի բանաստեղծական հոգու յուրահատուկ ընդհանրացումն է: Ժողովածուն բաղկացած է «Փակագծից դուրս» և «Ծովի օրենքով» շարքերից: Ժամանակային տարբեր ձևույթների մեջ, գրողն արտացոլում է ոչ միայն իր ներաշխարհն ու հոգու երանգները, այլ նաև ժամանակաշրջանի հասարակական, քաղաքական իրավիճակները:

Ժամանակակից պոեզիայի համապատկերում Բեգլարյանի բանաստեղծությունն աչքի է ընկնում կանացի նրբությամբ, համարձակությամբ, ոգու ուժով, մայրական ջերմությամբ, փիլիսոփայությամբ, դաստիարակչական ընդհանրացումներով, ճաշակով և տողի զգացողությամբ: Ժաննա Բեգլարյանի տողի եթերայնությունը մաքուր ու անաղարտ զգացմունքների հանրագումար է:

РЕЗЮМЕ
Поэтические границы книги «Вне скобок»
Алиса Багдасарян

Ключевые слова: стихотворный цикл, подтекст, политические ситуация, реальность, воображение и внутренний мир, философская проблематика, психологизм.

В данной статье рассматривается и анализируется книга современного самобытного писателя Жанны Бегларян «Вне скобок», являющаяся своеобразным обобщением поэтического духа автора. Сборник состоит из двух циклов: «Вне скобок» и «По закону моря». Через различные временные формы писатель не только раскрывает свой внутренний мир и оттенки душевных переживаний, но и отражает общественно - политический контекст эпохи.

На фоне современной поэзии стихотворения Бегларян выделяются женской тонкостью, смелостью, силой духа, материнской теплотой, философской глубиной, воспитательными обобщениями, вкусом и чувством строки. Эфирность строки Жанны Бегларян есть результат чистых и безупречных чувств.

SUMMARY
Poetic Boundaries of “Beyond the brackets”, the Book by Zh.Beglaryan
Alisa Baghdasaryan

Keywords: poetic cycle, subtext, political situation, reality, imagination and inner world, philosophical problems, psychologism.

This article examines and explores the book of the modern original writer Zhanna Beglaryan "Beyond the brackets", which is a kind of generalization of the poetic spirit of the author. The collection consists of the series "Beyond the brackets" and "Under the Law of the Sea". In different time morphemes, the writer reflects not only his inner world and shades of the soul, but also the social and political situations of the era.

Against the background of modern poetry, Beglaryan's poem stands out for its feminine subtlety, courage, fortitude, maternal warmth, philosophical depth, educational generalizations, taste and sense of the line. The ethereality of Zhanna Beglaryan's line is the result of pure and flawless feelings.